

946

5716

ԱՐՍԵՆ ԱԶՅՈՒԹԻ

ՍԻՐՈՑ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ
ԵՐԳԵՐ

Ա. ՇԱԲՏ



ԼԻՕՆ

ՏՊ. Հ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

1927

1. 99
- 50

SAMUELIAN
RUE MONSIEUR-LE-PRINCE
ARISVIE - DAN 88-65

891.99

Ա-50

Ահ 120P

423

ԱՐՍԵՆ ԱԶԵՄԵԱՆ

Սիրո Եհ Հայութեան
Երգեր

Ա. ՇԱՐՔ



LIBRAIRIE
AGOPIAN NUBAR
491, Cours Lafayette
LYON

2011

ԼԻՕՆ

ՏՊ. Հ. ԹԱՐԴՅՈՒԹԵԱՆ

1927

10966

2003

* P. PARENTZ *
LIBRAIRIE
233, Faubourg St-Jacques, Paris

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայկական բանաստեղծութիւնը, Հայաստանի թէ արտասահմանի մէջ, դեռ իր մեծագոյն երգիչը, իր Տանթէն կամ Հոմերը չէ տուած: Զէ տուած, որովհետեւ մեր պատմութիւնը, առաջ թէ հիմայ, չէ ունեցեր գրականութեան պահանջած ցանկալի ազատութիւնը: Հազիւ թէ մեծագոյն տաղանդ մը, հանճար մը իր աստուածային ճառագայթներն է դուրս արձակեր մեր երկնակամարի կապուտակ հորիզոններն, ահա՛, տիրեր է իսկոյն մեր երկրին ու երկնքին վրայ զարմանալիօրէն սե՛ւ, սե՛ւ մշուշ մը անթափանցիկ:

Վերյիշեցէ՞ ք, անգամ մը, Պարսկական, Արաբական, Թաթարական, Թրքական ու Ռուսական դաժան բռնակալութիւնները մեր հայրենի երկրին վրայ: Վերյիշեցէ՞ ք նաեւ, 1915—1916 էն մինչեւ այսօր, հոն տեղի ունեցող անպատմելի ողբերգութիւնները!...

Ու մենք, նորերս, չե՞նք յուսահատած այսօր, նորէն այսպէս:

Մենք կը սիրենք ու կ'ըմբռնենք խոր, մեր տառապանքն ու թշուառութիւնը: Մենք կը հասկնանք բռնապետութեան թունաւոր ողին: Մենք չենք ուզեր, չի պիտի ուզենք երբէք, վար դնել մեր եռագոյնը, մեր նուիրական դրօշը, մինչեւ որ Արտաւազդի կուռ շղթան չի քակուի...

Մենք ունինք մեր իտէալը, որ իտէալն է մեր աննման Արարատին ու Մասիսին, մեր Ռաֆֆիին ու Ահարոնեանին, մեր Սիամանթօին ու Վարուժանին: Առանց ազատ հայրենիքին մեր նախահայրերուն, մենք չենք կարող ճշմարիտ ազգ դառնալ, չենք կարող ՀԱՅԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏ ՄԾՍԿԵԼ:

Ատոր համար է, ահա՛, որ նորերս, ամէն բանէ առաջ, ու ամէն բանէ վեր, կ'երգենք Մէկ երջ մը միայն, Մեր երջի, մեր անուշ հայրենիքին արեգակին երգը... O, Patria! Patria! ...:

* * *

Ներկայ հասորիկին մէջ, ուզած ենք ամփոփել քանի մը հայրենական ու սիրոյ երգեր միայն, որոնց մէկ մասը տպուեր են արդէն Փարիզի «Յառաջ» օրաթերթին մէջ: Անոնք չեն ներկայացներ մեր ամբողջ տպուած կամ անտիպ ոտանաւորներուն շարքը: Այդ՝ կարելի է, եթէ ասկէ վերջ ունենանք լայն միջոցներ, նիւթական եւ բարոյական:

1 Սեպտ. 1927

ՓՕՆ ՏՀ ՇԵՐԻՒԻ (Յրանս)

Ա. Ա.



87848-42

39-58

ԻՄ ԵՐԳԵՐՍ

Սրտագին նուէր՝
Լեհոն ՇԱՆԹԻ

Ալբիւրներու կարկաչին պէս թող իմ երգերս ըլլա՞ն հոսուն,
Թոշուններու անծրեւավերջ գեղգեղանքի՞ն չա'փ քաղցրասուն.
Բոյրերուն պէս ըլլա՞ն մաքուր, գարունի թարմ զովիկ այգուն,
Ու նայադի մարմինին պէս ըլլա՞ն քնքո՞ւշ, հեղաճըկուն.
Նորափթիթ պարտէզներու ծառերուն պէս ըլլա՞ն դալա՛ր,
Մեր գիւղակին հովուական հին սրինգին պէս յո՛յժ գեղեցիկ.
Սիրոյ համար մեռնող տղու տառապանքի՞ն չա'փ բոցավտ,
Ու սափորի շրթներէն դուրս ծորող մեղրին նման քաղցրիկ:
Կաքաւներու գարնանաբոյր խմբերգին պէս ըլլա՞ն սիրու՛ն,
Ծով ցորեանի բոցակիզի հասկերուն պէս հասու՛ն, հասու՛ն.
Նոր Մայիսեան եղեմազեղ վարդերու պէս բացւա՛ծ անհուն,
Ու սարերու աղբանց—արուն ծաղիկին պէս դիւթի՛չ, վառվուն:
Հնադարեան ասպեսներուն, մարդերուն պէս խրո՛խտ ըլլա՞ն,
Միջնադարեան տաղերու պէս անկեղծ ու պարզ, զեղո՞ւն համակ,
Ակունքներու արձաթահունչ հայրիկին պէս զինջ անապակ,
Արեգակի շողերուն պէս պայծառափայլ, համայնական:
Ու իմ երգերս մեծ դարերու կիա՞նքն ունենան յաւերժական,
Բլլան հնչո՞ւն, ըլլա՞ն ուժեղ, ըլլա՞ն եւ խոր, անմա՛հ ըլլա՞ն,
Ու երրոր ես, վաղը անցնիմ ճամբաներէն հայրենական,
Հարս ու աղջիկ, մշա՛կ, բանւո՞ր, երա՛մ երա՛մ ինծի փութան:
Ինծի՛ փութա՞ն, ու իմ երգերս անոնց համար ապրի՞ն միայն,
Հայրենիքիւ Աշխատանքին ու Տօներուն գովքն ընելին,
Ու Հայրենի դաշտերուն մէջ, գետերուն մօտ օծանման,
Ազատութեան փառքէն գինով, լա՞ն ու խնդա՞ն, երգեն, պարե՞ն....

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ԱՓ ՄԸ ՍԵՒ ՀՈՂ

Մեր սարերուն,	Դաշտեր բերրի...
Գիտակներուն	Օր մը նորէն
Կարօտն ունիմ	Ես կը դառնամ
Կարօտն անմար...	Ու ձե՛զ կուգամ.
Մեր լիներուն	Կարօ՛տ, երա՛զ,
Բլրակներուն	Երգ ու սէրերս
Երազն ունիմ,	Զեզի՛ կուտամ,
Երա՞զն անմար...	Ու դուք ինծի
Ալբիւրներուն	Ա՛փ մը սեւ հող
Մեր քաղցրահոս,	Զէ՞ք նուիրե՛ր...
Ու ակերուն	Օ՛, այն ատեն,
Այն փրփրահոս,	Հոգիս նորէն,
Երգերն ունիմ,	Գարնան նըման
Երգե՛րն անմար...	Կը ծաղկի՛ վա՛ռ.
Ու ծեր քնքուշ,	Ու նո՞ր կիանքով,
Ու փափկանուշ	Արշալոյով,
Ծով ծիծաղին	Կ'ապրիմ ազատ
Յուշերն ունիմ,	Եւ հարազատ
Ո՛վ հայրենի	Կիանքը այս փուշ,
Արտեր ոսկի,	Կիա՞նքն այս անո՞ւշ...
Ո՛վ մայրենի	

ԴԻՒՂԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Շաւարշ Միսաքեանին

Նարօտ ծաղկած ծորակն ի վար գարնանագեղ մեր գիւղակին
Հիրիկ ժպտուն արեւին հետ նունութարներ նոր են բացուեր.
Մրգաստանին ծոյն է դալար, ու լայնարձակ ցանքի արտեր,
Ցայզին կաթած թարմ շաղերէն աղամանդի պէս կը վառին:

Բլրակներու թըփիկներէն ու մեծ բուռին ծորերուն տակ,
Զայնն է կուգայ թոչնիկներու, եւ կարաւի կարկաչերգին,
Մեղրածորի ժառաստանին բացաստանէն ալ սպիտակ
Շարքն է կ'անցնի խորհրդաւոր, յոյլ երկարող կարաւանին:

Արտերուն մէջ գեռ նոր հերկի, զոյգ զոյգ լծկան մոլոշ եզներ,
Կորիներուն վրայ բեղուն շողիքն իրենց դունչին ծորուն,
Կը դարձնեն արօրն անվերջ, տալով մեղոյշ ու սիրազեր,
Լուռ նայուած քներ գուղձերուն տակ խորին մեռնող ծիլ խոտերուն:

Ու գիւղակին աղջբնակներ, դեռափթիթ ու գեղեցիկ,
Հաց կը տանին աշխատանքի, ու լուծ վարող մշակներուն,
Անոնք կ'անցնին ճամբաներէ ճերմակ ինչպէս կաթնածաղիկ,
Միշտ կանչելով սիրտեր այրող կարօտագին շէրեր սիրուն:

Հեռուն ի վեր, հովհաններու բարձունքներուն վրայ ծաւի,
Կը տեսնուի հազնէ հազիւ խումբեր հօտի ցանցիր կ'արծին,
Անոնք նման գարնան գետին, որ շառաչուն կը թաւալի,
Երբ արեգակն է բոց դարձեր՝ զուրի կ'իջնեն կաթնաղբիւրին:

Ու ի՞նչ քաղցրիկ անդորրութեամբ պահն ալ կուգայ միջօրէին,
Երբ գեղուղէշ ծառեր բարախ շուք կը ծզեն նուրբ շըղարշէ,
Երբոր յոգնած հօտ ու մշակ, քուն կը մտնեն խորունկ, հեշտին,
Ու լութիւնն անհուն աղւոր թեւերն անծիր կը տարածէ...:

ԱՐՏՀՈՒՆԶՔԻ ԵՐԳԵՐ

Հօ՛յ, արտե՛ր, արտե՛ր, հայրենի՛ արտեր,
Տապէն ամառուան՝ դուք կակուծ հասկեր,
Մշակներ նորէն մանգաղ են աւեր,
Ահա ծեղ կուգան, արտե՛ռնձքն է եկեր:
Ինչքա՞ն օրերով, ծարաւ ու պապակ,
Հիւանդ, դալկահար, դուք սպասեցիք,
Ի՞նչ ցաւ մըմունջով, կարօտով համակ,
Պուտիկ մը զովին շունչն երագեցիք:

Հօ՛յ, արտե՛ր, արտե՛ր, ոսկեծով արտեր,
Շողէն ամառուայ աղնծւած արտեր
Մշակներ ահա մանգաղ են սրեր՝
Զեզի կը փութան, Յուլիսն է եկեր...:

Կարմրեր են կարմրեր՝
Հարսները հնծոր,
Ժիր ժիր մշակներ
Խուրձկապի սովոր՝

Քաղի են ելեր
Բոլորը մէկէն,
Ու մըմուռ հասկեր
Բուռ բուռ կը հնծեն:

Արեւը նուռ է
Լեցուն բոլորակ,
Ինքն ալ ելեր է
Կը նայի յատակ...

Կը նայի յատակ
Տեսքը արտերուն՝
Ծովակ առ ծովակ
Հասուն ու ոսկուն...

Ու գէմքով արբուն
Կ'այրի հրավառ
Քաղւոր հարսներուն
Պատկերէն վառ վառ:

Սար, մարմանդ, գիւղակ
Շողով ու բոցով
Կ'այրբին համակ
Յուլիս հրդեհով.

Կը ճայթի սաստիկ
Զուն արագիլին,
Արսան հուրալիք
Զէր տեսեր տարին:

Ի՞նչ փոյթ, հրդեհ կայ
Խարտեաշ արտերուն,
Հարս, աղջիկ, տղայ
Զուարթուն, եռուն...

Վառեր են խանդով
Կը հնծեն, կ'երգեն,
Երազուն, զինով
Կ'երգեն կը հնծեն...

ԳԻՒՂԻՍ ՃԱՄԲԱՆ

Ճամբան ճերմակ, ճամբան երկար, անդորրիկ,
Օծի մը պէս գալարուն էր ու այգուն,
Փոշին անոր մըշուշին հետ թափանցիկ,
Ծովակ կ'ըլլար բացաստանին տարածուն:

 Ճամբան մեծ էր, մեծ գետի մը պէս յորդուն
Որ գարունին կը թաւալի շառաչուն.
Ճամբան նման էր կարապի մը սիրուն
Ու լընին վրայ կը սուրայ հեշտ ու գինով:

 Ճամբան սատափ բացուած ծաղիկ մ'էր աղուոր,
Շուրջը անոր կը բացուէին անանուն
Հազար հազար բոյս ու տունկեր երփնաւոր,
Բուրմունքներով քաղցրիկ, քնքոյշ ու զեղուն:

 Ով մեր ճամբան, մեր Մարգերին դալարուն,
Սիրսոս հիմայ մեծ փափաքով երազուն,
Քեզ կը թըռչի, քեզի կուզայ տարփափառ.
Ապրիլ նորէն անգամ մըն ալ քեզ համար:

 Սօսի ծառեր զեղաղալար, վարսաւոր,
Սյգածիծաղ արշալոյսին ոսկեծոր,
Աղբերակին կալ-Աղբիւրի ջուրերուն՝
Կը ժալտէին երբ քաղցրութեամբ մը անհուն,
Կը քալէինք կաթնասպիտակ, պատարուն
Լայն կողերէդ, առնելով միշտ արոփուն
Ծոցէդ բոյրեր ծաթրինածոր, քաղցրագին,
Որ կուտային մեզ շունչն համակ գարունին...

Ճերմակ էիր ինչպէս կոյսերը մատղաշ
Մեր գիւղակին, որոնց վարսերն ոսկիբաշ,
Արեգակին ճառագայթէն ալ սըլացիկ
Կը փայլէին անհունօրէն գեղեցիկ:

Ճերմակ էիր ինչպէս արծան մը ձիւնէ,
Որ Արուեստի ձեռքը վարպետ կը շինէ.
Քու լուսագեղ ծիծաղը ջինջ ու պայծառ,
Կեանք կը շընէր մըշակներուն մեր լոծվար:

Ով մեր ճամբան մեր Մարգերին հեռաւոր,
Հոգիս հիմայ մեծ կարօտով տարփաւոր,
Երնէկ, դառնար անգամ մըն ալ իմ՝ գիւղա՛ր,
Տեսնէր նորէն քեզ եզներուս հետ ջուխտակ:



Ս Ի Ր Ե Ր Գ

Դուն պիտի գաս	Հասակըդ նուշ՝
Սիրաբաղձիկ,	Ծառ դալարի,
Ով իմ երազ	Աչերդ անուշ.
Հիրիկ աղջիկ:	Սափոր մեղրի,
Զովիկ այգուն	Դուն պիտի գաս...
Կաթնացօղէն	Ու պիտի գաս,
Ծիծերդ լեցուն	Թուրինչ, ուժնան,
Դուն պիտի գաս:	Ծոթրին ծորան
	Մըզաստանէն,
	Մեր գիւղակին:

ՄԱՐԳԵՐԸ

Մարգերն ունէր վտակիկներ կարկաչուն,
Ծառեր բարտի, փըշատիներ, ուռենի,
Առաջն անոր գեղահասակ ու կանգուն
Կը մեծնային որպէս կոյսեր գեղանի:

Մարգերն աղուոր դալարի ծով մ'էր համակ,
Զոյգ մը գետեր արծաթահոս թեւերով
Անոր երկու եզերքն ի վար փրփրելով
Կը հոսէի՞ն, կը հոսէի՞ն շարունակ:

Մարգերն ուներ իր ծորակները խընկուն.
Դաղձ ու զամպուր, մասուր տունկեր, անանուխ,
Ծոթրիններու բոյրերուն հետ հեշտարբուն,
Քաղցրութիւններ կը ծորէին սրտաբուխ:

Մարգերն ունէր դարաստաններ շրջափակ.
Սէզզ ծըլուն հոն թումբերուն միշտ կ'աճէր,
Մասրենիներ, ալոճենի, մոր թուփեր,
Շուրջը անոր կը դառնային բոյրակ:

Բոլո՞ր, բոլո՞ր մեր ունեցած արտերուն,
Թագումին էր Մարգերը մեր հայրենի...
Օդը մաքուր, զըրիկին հետ պաղպաջուն,
Մեռած կեանքին շունչ կը բերէր գարունի...:



ԱՐՏԻՆ ՄԷՋ

Յ. Նարդունիին

Ինչպէս արքան, որ կ'ունենայ պալատներ,
Աղամանդէ թագ ու պսակ, ծիրանի,
Կամ պարմանին քսան գարուն բոյրեր՝
Սիրուհիին համար անգին ի'ղծ ունի,

Այնպէս ալ, հայրս էր եզներով մեր ջուխտակ.
Մեղրիկ նայուածքն անոնց ղէմքին հանդարտիկ,
Հազար արեւ կը ցաթեցնէր շողարձակ,
Իր մշակի հակալին վրայ երջանիկ:

Օրերն հերկի մուշկ ու ծոթրին կը ծորեն!
Հայրըս ուրախ, լուծն եզներուն կը կապէր.
Կը զարնէր պինդ խոփին արօրին փայտաշէն,
Ու թարմ այգուն համբոյրին տակ լուսաներ,

Անգամ մըն ալ աչքին անոնց սիրազեր
Պարացնելով նայուածքն իրեն, կը կանչեր,
« Հօ՛, հօ՛, հօ՛, ո՛վ իմ կարին դուք առիւծներ,
Հոգիս ծեզի ե՞րբ չեմ ըրեր ես նուէր...»:

Կորիներէն հետզինետէ, լայնօրէն,
Արօրն երբոր կը բանար խո՞ր ակոսներ,
Այն ի՞նչ բուրմոնք կ'արտածորէր գուղձերէն
Տահարներու խունկերուն պէս սրբանուէր:

Եզները յաղթ, եզները լուռ անսահման,
Մելամաղձոտ նայուածքներով, միշտ հըլու,
Կը դարձնէին արօրն անվերջ, յոգնութեան
Առանց երբեք փոքրիկ նշան ցոյց տալու:



ՍԻՐԵՐԴ

ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ ՔԵԶ ԵՐԲՈՐ...

Ես կը սիրեմ քեզ երբոր, քու մարմինիդ ծեւերուն
Դաշնակութիւնն ունենայ արեւուն լոյսը պայծառ.
Երբոր աչերդ ինձ ժպտին, ողկոյզներու պէս հասուն,
Որ սարբինան կ'ընծայէ այզեկութքին ուսկեվառ:

Ես կը սիրեմ քեզ երբոր, քու գիրգ հասակըդ ըլլայ
Սաղարթներով զարդարուն սօսի ծառին պէս երկա՛ր.
Երբոր վարսերդ ա՛լ իջնեն ուախդ սատափին վրայ,
Ինչպէս հասկերն Յուլիսի ցորեաններուն բոցավառ:

Ես կը սիրեմ քեզ երբոր, քու նուրբ նայուածքըդ լուսնա՛յ
Արծաններուն պէս մարմար, ու անոնց պէս զեղեցիկ.
Երբոր շրթներդ աղուանոյշ, բուսաերու պէս զեղահմայ,
Արինին մօտը նուրի, դառնան ուժգին ցոլացիկ:

Ես կը սիրեմ քեզ երբոր, դու զարունին ինձ փութաս,
Որ լոյսին տակ ծոցն իր բաց կը ծիծաղի՛ հիացիկ.
Ու կը պաշտեմ քեզ անհուն, եթէ ըլլաս տրտմերազ
Իմ վշտերոս ու ցաւիս քա՛ղցը ընկերը մենիկ:

Ու կը սիրեմ քեզ դարձեալ, սիրով մ'անկեղծ հնաւանդ,
Երբոր համակ այգային ծաղկումին պէս կաթնալոյս,
Սիրտը՝ ալբի՛ւր մ'ըլլայ զինջ, սէրը՝ բիւրեղ աղամանդ,
Որոնց մէջ ես երբ նայիմ, տեսնեմ պատկե՛րը հոգւոյս:

ԴՈՒ ՉԻ ՑԵՍԱՐ ԱՐՇԱԼՈՅՑՆ...

— յօւ —

ՕՐ. Մ. ԻՆ

Գու չի տեսար արշալոյսն այս առաւօտ վարդագէս,
Երիտասարդ քու հոգիդ չի լըսեց երգն այգային.
Ճամբուն վրայ չի գացիր դիմաւորել եկորին,
Ու քու երազը մնաց թոշնած ծաղիկն անըստուեր:

Կեա՞նիքն էր արդեօք որ երե՛ք չի հասկցաւ քեզ միակ,
Դո՞ւն եղար որ չուզեցիր սիրտը բանալ զարունին.
Սոխա՞կն արդեօք անիրաւ չի սիրեց քեզ տաբիագին,
Հոգի՞դ էր որ չի լըսեց սիրոյ մնծ ծայնն անապակ:

Մտածումիդ պինդ փարած դու վշտահար նստեր ես,
Մահուան մը չափ տրտմալի ինչո՞ւ կուլաս տիրադ'մ.
Թեւերուդ մէջ ես ինչո՞ւ ամայութիւն կը տեսնեմ,
Ու շրթները՝ որ ահա՛, անապատնե՛ր են կարծե՛ս...

— Դու չի տեսար Արշալոյսն առաւօտեան վարդագէս,
Աստուածուհին Աֆրոդիտ քեզ չի սիրեց սրտագին,
Ու օտարի մը նըման կը հարցընես առանձին՝
— Սիրողներու աստղը վառ, ինչո՞ւ դժբախտ է այսպէս...



ՈՒ ԴՈՒՆ ՉԵԿԱՐ ԻՆՉ ԱՅՑԵԼԵԼ...

—)o(—

Ու դուն չեկար ինծ այցելել իմ այս սենեակըս տխրալի.
Քու բուրմունքիդ, քու ծիծաղիդ, քու խօսքերուդ հմայքն աղուոր,
Զէ՛ բերեր դեռ, ուրախութիւնն՝ իմ այս սրտիս ծանձրոյթով լի.
Ու քայլերուդ հնչիւններուն ես կ'սպասեմ մէն մենաւոր:

Ահա՛ մեկդի ես կը թողում, իմ մատեաններս այնքան բարի.
Կը մոռանամ պահ մը անոնց աստուածալին լեզուն հըզօր.
Զեմ իսկ դիտեր սա լամբարիս լրյոն արծաթուած՝ որ կը վատի,
Ու ես ինծի՝ չեմ ճանաչեր, ու ես ինծի կը զգամ անզօր:

Պիտի դառնա՞ս արդեօք կրկին, ու այցելել տընակըս լրու.
Ինչո՞ւ այդքան դու կ'ուշանաս. ե՞րբ պիտի զաս. յետոյ ի՞նչպէս.
Սպասումըս երկա՞ր արդեօք պիտի տիւէ. եւ մինչեւ ո՞ւր.
Շա՞տ պիտի դեռ տանջուիմ մինակ, ու հեկեկամ որբի մը պէս:
Կը հաւատամ քու զօրութեան, ու կ'ունկնդրեմ անոր առաջ.
Կը ծնրադրեմ քու ներդաշնակ ծիւն մարմինիդ վայելցութեան.
Առանց քեզի, մինչեւ հիմակ, անապատներն էի քաշուած.
Անմահ ես դուն, եւ փրկարար. եկո՞ւր, կուա՛ ո՞վ աննման:

ՅԻՇԱՏԱԿ

—♦—

Ո՞վ դուն ծաղիկը կապոյտ հայրենական երկինքիս,
Ո՞վ դուն նուազը աղուր, որ յուզեցիր իմ հոգիս.
Եւ դո՞ւն, ո՞վ լոյս, որ եկար իմ երազիս մէջ լրոին,
Վառ արշալոյսը բանալ անմահական տարփանքին . . . :



ՕՐ ՄԸ ՄԻԱՅՆ...

—)o(—

Օր մը միայն վայելեցի քու զերմ ծիծաղն աստուածալին,
Դաշնամուրին առաջ նատած, դուն կ'երգէիր երգ մը սիրուն.
Վարսերդ արծակ, դէմքըդ լրոին, մարմինըդ նուր ու այգային,
Կը դիտէիր բանաստեղծի աչքերուն պէս հեռո՞ւն, հեռո՞ւն:

Հեռուն այդ քու, երազավառ իմ սիրաըս էր, քնքուշ աղջիկ,
Մեծ կայեամի սիրերգներէն, դուն աւելի անոյշ-տխո՞ւր.
Օր մը միայն, ես ապրեցայ, քու նորաբաց սէրն երջանիկ
Ու բաժանումն ինծի տարաւ օտար երկիր անհրապոյր:

Ո՞վ պիտի ինծ, նորէն անզամ, վերադարձնէր գիրկըդ, հոգի՞ս.
Ա՞խ, ո՞ւր էր դուք, հնադարեան լոյս նայատներ զեղաժըպիտ.
Ափրոդիտէ, անզո՞ւթ, ինչո՞ւ սըլաքներով կը տանջես զիս,
Պուբակներու դու սիրահար, ուկիամայր ո՞վ Անահիտ:

Գըթացէ՛ք ինծ, մի տանջէք զիս, բաւ են ցաւերս տառապազին.
Պիտուզէի խոնարհիլ ծեզ, սիրտըս դնել նիշտ ծեր ոտքին,
Պիտուզէի ընծայ բերել զարդերս ամէն ծեր Տաճարին,
Միայն, միայն ինծ դարձնէիք՝ ինձմէ հեռու Սէըըս անզին:



ՔԵԶԻ ՆՈՐԷՆ ԱՅՍ ԻՐԻԿՈՒԽՆ...

Քեզի նորէն այս իրիկուն վար կը դնեմ սեղանիս մօտ,
Ու պատմելով մեր յուշերուն քաղցրութիւնն այն հեքավական.
Ցոյց կուտամ քեզ մեր հին սիրոյ երազական պատկերն աղօտ,
Ու դուն ինկած թեւերուս մէջ կուլաս նըման փոքրիկ մանկան:

 Կը վերյիշենք վայրկեաններն այն զոյգ ելադերի ափերն ի վար,
Պէթհովենի նուագն աղուոր, որ հեռուէն մեզի կուգար.
 Կը վերապրինք այն գարունին պուրակը լուռ ու ծաղկավառ,
Ու անցեալի բոցերէն մենք կը հրդեհուինք երկա՞ր երկա՞ր:

 Ո՞վ ստեղծեց սիրոյ այս մեծ աստուածութիւնն անապական,
Ո՞վ երգեց քու աչերուն մէջ, յաւերժական այդ երգն անմար.
 Քու մարմնիդ մէջ ո՞վ նետեց այդ փունջը կարմիր հազարբուրեան,
Ու ծեւերուդ, ու շնորհքիդ հմայքն ինչո՞ւ այդքան է վառ:

 Ու վեր կ'առնես զլուխոյ աղուոր, որ աչքն է զինջ առուակներուն,
Ու կը ժապի՞ս, ևս կը մոռնամ աստուածներուն նայուածքն անմահ.
 Կը մոռնամ՝ արեգակին գարնանագեղ լոյսը զեղուն,
Ու կը հարցնեմ թէ ի՞նչպէս դուն պիտի մեւնիս երբ Մահը գայ:



ԵՍ ՀԻՄԱՅ ՀԵՌՈՒ...


Ես հիմայ հեռու, քեզմէ բաժանուած, ափն այս լճակին
իմ ցաւը կուլամ, կարօտըս անհուն՝ հրդեհ մը անմար.
Ես հիմայ մինակ, հեռու քու տեսքէն, գիւղակն այս օտար,
Քեզի կը կանչեմ, քու սէրըդ կ'երգեմ ախու՞ր ու լըդին:

39 50

Առաւոտ մ'Աշնան, բախտը մեզ բաժնեց դառնօրէն յուզիչ.
Դու եկար մինչեւ սրարշաւ վազող կառը ծանրաբեն,
Ու վերցին անգամ ինկար իմ զգիս, արցունքներ կիզիչ
Այրեցին սիրալս, որոնց վէրքերէն դեռ չէ ան բուժւե՞ր...

Նպատակ չունիմ, նոր տենչանք չունիմ, բոլորն են մեռեր,
Պատկերդ երբ կուզայ խաւարել աչքերս, անքուն ու թափառ
Կ'իյնամ դաշտերը, հեռաւոր անձայն ծորերը երկար,
Զայն կուտամ անոնց, ծայնըս չեն առներ, լուռ են, անտարբեր:

Ե՞րբ պիտի նորէն քու մօտըդ ո՞վ երազ աղջիկ,
Կամ դու ալ նըման արդեօք իմ սրտիս կը տանջուի՞ս յոզնած.
Եւ ահա՛, կրկին, իմ միտքըս կուզան աչքերըդ քաղցրիկ,
Եւ ահա՛, կրկին, ձանձրոյթն ու թախիծ իմ սիրտս են պատա՛ծ:



ՈՒ ԵՍ ՆՈՐԷՆ .

—)o(—

Ու ես նորէն, ու ես նորէն քեզի՛ կուզամ, քնքո՛ւշ աղջիկ,
Բընութեան այս ծո՛վ բոյրերէն հոգիս խոռվ ու տժգունած.
Բան մը սրտիս ամենամութ անկիւնն ինկած, լո՛ւռ ու մենիկ,
Զիս կը տանջէ՛, զիս կը տանջէ՛, անհունօրէն խելազարած:

Ես կը սիրեմ մենութիւնն իմ, անոր մէջ է որ ես կ'երգեմ.
Ես կը սիրեմ բութիւնն այս, ի՞նչպէս ապրիլ առանց անոր.
Բայց երբ կ'իջնէ հոգւոյս վրայ տարօրինակ ծանձրոյթ մը խոր,
Այն ժամանակ երազանքով քե՛զ կը յիշեմ, ու կ'արտասուեմ...:

Ես լսեր եմ երգը սիրուն սրինգներուն մեր հովուական,
Ես տեսեր եմ ծիծաղը զինջ ծաղիկներու նուրբ ու բուրեան,
Ապրեր եմ ես տեսերը չքնաղ հովիտներու տարածական,
Ու երգեր եմ ծեւերն աղու՛ր, սա կոյսերուն օտարական:

Բայց քու սէրը, ո՞վ իմ երազ, ո՞վ իմ փոքրիկ նայա՛դ աղջիկ,
Քու վառ սէրը, այդ բոլորէն ես գերիվեր եմ քանդակեր.
Դիցանոյշի նայուածքին պէս, դու, երազո՛ւն ու գեղեցիկ,
Եմ երգերուա՝ «Երգ-Երգոց»ն ես, յաւէրժ, անմա՛հ ու սիրազեր:



ԱՆԹԱՆՈԹ

—)o(—

Վարսերդ երենոս երկա՛ր կը ծըգես.
Հպարտ վեր կ'առնես գլուխըդ եղնիկ.
Քայլերըդ թեթեւ, ու դուն ժպտերես
Կ'անցնիս իմ մօտէս, ո՞վ սիրուն աղջիկ:

Նայւածքըդ բոլոր, արե՞ւն է սա նուշ.
Աչերըդ քաղցր, աստղե՞րն են անմար.
Շըթներըդ, բացւած վարդե՞ր են քնքուշ,
Ի՞նչ ես, ո՞վ աղջիկ, ո՞վ դուն սիրավառ...
—————

* *

Նստեր եմ մինակ այս բաց դաշտին մէջ,
Եմ շուրջս են բացւեր ծաղիկներ քնքուշ.
Կ'առնեմ բոյրն անոնց, հողին հետ անուշ,
Բայց թախիծ մը խոր-կ'այրէ զիս անշէց:
Ես կուզեմ դառնաս, տարփանքով զեղուն,
Կարօտըդ խառնես կարօտիս անհուն,
Բընութեան շքեղ, խոռնկ բոյրերոնն այս,
Վարսերըդ օծես, ու ինձ միանաս:

ԵՍ ԵՄ ՈՐ ԱՇԱ...

— յօ—

Ես եմ, որ ահա, եկեր եմ մինակ քու մօտըդ նորին.
Ես եմ, որ այս լուռ գիշերով անցեր արգելք ու խաւար,
Քեզի՛ եմ բերեր երազ ու կարօտ, եւ սէր համօրէն:

Ի՞նչպէս քեզ պատմեմ ծանձրոյթն իմ սրտիս, վշտերըս անմար.
Ի՞նչպէս քեզ երգեմ գաղտնիքը ցաւիս, իմ ցաւիս անջինջ.
Ցաւը իմ սրտիս, նմանը ցունի, կը մնայ միշտ վա՛ռ:

Յիշատակն ահա՛, մեր անցեալ սիրոյ պատկերովն իր ջինջ.
Ի՞նչպէս լուտասի ծաղիկը բուրեան՝ ծաղիկն ես սրտիս,
Լոյսերուն լոյսը երբ մօտըդ ծագի, ոչի՞նչ է, ոչի՞նչ....:

Ո՛վ ամենազեղ, ո՛վ իշխանուհի, ո՛վ կեանքը կեանքիս,
Ես եմ, որ ահա՛, եկեր եմ մինակ քու մօտը նորին,
Նստէ՛, ու թոյլ տո՛ւր, որ քու խօսքերէդ արքենա՛յ հողիս...

Ես շա՛տ ուզեցի դուրս չը զալ երբէք մենութեանս խուցին,
Ես շա՛տ ցանկացի չ'հոսուտել բնաւ ո՛չ վարդ, ո՛չ ծաղիկ.
Ես շա՛տ տենչացի իմ մէջս պահել բաղձանիքներս ամէն:


Ատեր եմ պահ մը, եւ կինն ու ծաղիկ, ժափանին բաղցրիկ.
Միայն ես ինձմով, միայն ինձ համար ապրիլ եմ ուզեր,
Բայց կեանքը ինձի տարբեր է խօսեր, ու լըսեր սաստիկ...

Ինչ որ ալ ըլլայ, ես զիտեմ հիմայ, ո՛վ դուն Սիրազեր,
Որ առանց քեզի չեմ կարող համնիլ կատարը, հեռուն,
Միակ ու հեշտին միջոցն ես աղոր, տանիելու զիս վե՛ր...

Ծաղիկներն ամէն երբոր գարուն գայ անձրեւը կ'երգեն.
Հողը մայր երկրին կը դառնայ անպէտք առանց անձրեւի.
Եւ վարդը կարմիր կը բացուի լիցուն՝ առօտի ցողէն:

Որպէսզի, քու ալ բոյրըդ տարածւի՛, վարդին պէս բացւիս,
Որպէսզի, ես ալ կարենամ երգել երգերս իմ բարի,
Դու յաւէտ պիտի իմ մօտը ապրիս, ո՛վ իմ տարիուհիս:

Թո՛յլ տո՛ւր, ուրեմն, քու մօտըդ նստիմ, նայի՛մ աչերուդ.
Խօսքերուս անկեղծ դու վերջին անգամ, հաւատո՛ անհուն,
Ու բա՛ց պարտէզը տարիանիդիդ անտ՛շ, ու բա՛ղցը հոգուդ:



ԵՒ ԱՀԱ ԿՈՒԳԱՍ . . .

— 10 —

Եւ ահա կուգաս թեթեւ քայլերով իմ դուռը զարնել.
Դուռը կը բացի հոգիս մենիկ, յուշիկ ու յանկարծ.
Արքան եմ կարծես մեծն Տիգրանի մեծ գահին բազմած,
Թանկագին հիւսւած ծիրանին ուսիս, համակ ոսկեթել.

* *

Յուրա ու մշուշոտ, սառ Դեկտեմբերի օրերէն մէկն էր.
Ես այցի եկայ ափունքը Ռօնի, գիւղակն այն օտար.
Սրահն էր լեցուն, շնչող բազմութիւն, երգ, խնդում ու պար,
Դու միայն խոհուն, առանձին էր, լուռ ու անտարբեր:
Ու երբ սկսան պարերն հայրենի պէս պէս ու սիրուն,
Քեզ չի տեսներ, խոռվքիս մէջ մութ, կոյր էի դարձած.
Նազելի տեսքիդ, փարթամ հասակիդ աղեղը լեցուն
Իմ սիրոս էր զարկած՝ նման նետահար զինւորին ինկած . . .

Ու երբոր հիմա, վերատին կուգաս սիպտակ թեւերով,
Իմ դուռը զարնել, յուզել իմ սրախ ծովակն երազի,
Ես յաւէտ մոոցած վերքերս իմ խորունկ, սիրոյ համբոյրով
Կ'ողունեմ բարի եւ աստւածային քու այցըդ ինծի . . .



ԱՅՍ ԻՐԻԿՈՒԽ ԿԸ ԲԱՆԱՄ . . .

Այս իրիկուն կը բանամ լայն իմ մենութեան դռները գոց.
Լո՛յսը կուգայ շրեղութեամբն իր համօրէն եւ ոսկեզօծ.
Կ'ուրախանամ անոր այցէն, կը ծնրադրեմ առաջն անոր,
Ու վեր կ'ելլեմ, մոռանալով չարչարանքներս իմ բիւրաւոր.

Բայց երբ կ'երգեմ լո՛յսը անհուն, պիտ հասկնաք դուք իմ կուան,
Երազներու եւ վարդերու, ու սէրերու աղջիկը այն,
Որով օր մը արտասուեցի. — ո՛վ արցունիներ ուրախութեան.
Եւ հիւսեցի երգեր հազար, երգեր անո՞յշ ու գիւթական:

Ահա՛, պայծառ զինջ լուսընկան աստղերու գիրկն ինկած մինակ.
Ահա՛ լընակը պապղուն, դաշտավայրին մէջ բոլորակ.
Սրինգն ահա՛ խիստ քաղցրածայն, որ կը յուզէ լիո, սար, բլրակ,
Ու երգն աղւոր սա զետակին կարկաչահոս ու անսպակ:

Բայց չէք տեսներ քերթուածներու քերթուածը այս անմահական
Որ այս դիւթիչ լուռ գիշերով կուգայ այցի իմ մենութեան.
Կարծես մեղրի սափորներուն քաղցրութիւնը ունենար այն
Եւ կամ զարնան ծաղիկներու շնորհքները դէմքին վըրան:

Ու վերստին ես կը փակեմ իմ մենութեան դռները լայն.
Կը մոռանամ մեծ բնութեան ոսկի զանձերն յաւերժական,
Ու իմ կրծքիս ու թեւերուս մէջ պինդ սեղմած քաղցրիկ կուան՝
Կ'ուզեմ հասնինք մեր մեծ սիրոյ երազագեղ ափին անսահման . . .



ՊԻՏԻ ԴԱՌՆԱՄ ՕՐ ՄԸ ՆՈՐԷՆ

“ԱՂՋԹԵՇ ԵՒ ԵՐԳԵՇ...”
Շ. Միսաքեան

Պիտի դառնամ օր մը նորէն այդ պերճանքի Ռստանը շէն.
—Պարտէզ մըն է Սէնը երկա՛ր, գիշերական լո՛յս ջահերով,—
Պիտի անցնի՛մ կրկին անոր դալարագեղ լա՛յն ափերէն,
Ու դուն հոն տեղ միտքըս պիտ'զաս, չարչարելով հոգիս խոռ՛վ:

Բայց կը սիրեմ ես չարչարուի՛լ առանց ցաւի կեանքը կ'ատեմ.
Ես կը սիրեմ արցունքներու ծովը կապոյտ ու ծփծփուն.
Տառապանքի Աստուածն է սոսկ որ կը ճանչնամ ու կը պաշտեմ,
Երնէկ անոր, որ կը կարդայ մեծ Սոկրատի Մահը անհո՛ւն...

Մի՛ ըսեր ինձ, որ խեղճ մըն եմ, կը թափառիմ անտո՛ւն, լլրուն.
Երնէկ ինծի, բիւր փա՛ռ ինծի,— քերթո՛ղն եմ ես երազական
Դուն չե՛ս գիտեր թէ որքա՞ն մենք ուրախութիւն ունինք զեղուն,
Սրտերը մեր երջանկութեան ովկիանոսներ են անսահման:

Գիտեմ, վաղը երբոր անցնիմ այդ Արուեստի Ռստանէն շէն,
Միտքըս պիտ'զաս շբեղութեամբըդ տարօրէն ու վրսեմ,
Ու հոն, մինակ, քեզ յիշելով՝ դառնակալիծ պիտ' արտասուեմ
Հիւսելով քեզ մանեակներ պերճ երազանուրբ ու նկարէն:

Ու օր մը երբ վերջին անգամ վերադառնամ ծոցը մահուան
Դուն կրելով զանոնք մարմար ու սատափէ կրծքիդ վըրան,
Պիտի ըսե՞ «ես երգեցա՛յ քերթողէ մը՝ ինչպէս Լոռան...»
Ու արցունքներդ քու ա՛լ յորդուն, պիտի հոսի՛ն զետի նըման...

ՕՏԱՐ ԵՐԿՐԻ ՄԷԶ

I

ԻՄ ՎԻՇՎԸ

Իմ վիշտը երբեք դուք չեք հասկնար, շա՛տ է խորունկ ան,
Գաղտնիքն իմ ցաւիս, ծո՛վս է անյատակ, ովկիան մը անհուն.
Զանձրոյթն իմ սրտիս, ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ ու սահման,
Թախի՛ծը հոգւոյս կը տանջէ յաւէտ մարմինս իմ կըքո՛ւն:

Արշալոյսն աղւո՛ր, առաջւայ նման չ'երեւար ինծ վա՛ռ,
Լոյսն արեգակին կանանչ գարունի, ինծ խորթ է հիմայ.
Ծաղիկներն ամէն, ծաղիկներ գոյն գոյն, չե՛ն հոգեհրմայ,
Ամէն ինչ մօտըս, ու շուրջըս, հեռո՛ւն, օտա՞ր են, օտա՞ր:

Վաղո՞ւց է, կը զգամ բան մը սրտիս մէջ մարած յաւէտեան,
Իմ կրծքիս վրայ, պատեր է կարծես, սառոյց մը անհալ.
Մէրերըս բոլոր կը թըւին ինծի մոխրացա՛ծ, ունա՞յն.
Ո՛վ դուն հոգիի մեծ Ուրախութիւն, մեռեր ես դո՛ւն ա՛լ . . . :



Ի ԶՈՒՐ Է ԱՅԴԹԷՍ

— 10 —

Ի զուր այդպէս, դուք կը ժպտիք, օտարական այս հէք տղուն,
Գարունի թարմ ծիծաղը ձեր, խայթող սըլաք մ'է իր կըրծքին.
Եղեմական բուրմունքը ձեր, բաժակ մ'է սոսկ թոյնով լիցուն,
Ու լոյսը՝ ձեր, պատանք մ'է իր մութ աչքերուն տառապագին:

Երբ ան կ'անցնի ձեր առջեւէն, հոգին է միշտ թափառական,
Զեղ տեսնելով չուրախանար, աւելի ճիշտ, կը ծիւրի ան.
Ինքն ալ ունէր ծեզի նըման՝ դալարաւէտ պուրակներ լայն,
Որոնց կարօտն է, որ ահա՛, կ'այրէ սիրտն իր երազական:

Գետա՛կ, առուա՛կ, սարեր, ու դո՛ւք, նկարագեղ ո՛վ բլրակներ,
Եւ դուն, չքնաղ Ռոնի ափին տարածական սիրուն գիւղակ,
Գուցէ ըլլաք դուք իր երկրէն աւելի ճոխ ու գերիվեր,
Բայց բան մը զինք միշտ կը տանջէ ձեր այս խաղաղ երկինքին տակ:

Յիշատակն է այն՝ սիրավառ, իր երդիքին հայրենական.
Կաթն է արդար, որ դեռ մանուկ, տուեր է իր մայրը բարի.
Մտածումն է իր երկնքին, որուն կապուած է անբաժան,
Սէրն է այդ իր տանջուած ցեղին, ազատատենչ ու միշտ գերի....



ՀԱՅՐԵՆԻ ԾԱՂԻԿՆ ԵՐ

Ահա կուգաք դուք ինծի, ո՛վ հայրենի ծաղիկներ.
Կարծես երազ մ'ըլլալիք, եւ կամ կոյսեր սիրավառ.
Լքեր եմ ձեզ տրտմօրէն, հըրք է, լաւ չիմ ես յիշեր,
Ու այդ օրէն աշխարհն ինձ դարձեր է բանտ մը խաւար:

Ի՞նչ պէտք բնութեան ու մարդոց հազա՛ր, հազա՛ր այս գանձեր,
Երբ ես կրկին չիմ դառնար դրախտանման գիրկը ձեր.
Օտարը միշտ օտար է, ըլլայ նոյն իսկ տարփաչեր,
Միայն մայր հողն է անոյշ, որ պիտի տայ ինծի սէր:

Ու ձեզ հիմա յիշելով, կ'իյնան աչքէս արցունքներ
Ո՛վ գարունի խնկաբոյը հայրենական ծաղիկներ.
Մեխակ, ծոթրին ու շուշան, դու՛ք մայիսեան թարմ վարդեր,
Երջանկութիւնն իսկական միակ ծեզմով եմ ապրեր:

Օր մը նորէն ժպտաղէմ, երնէ՛կ, կրկին դառնայի
Իմ հեռաւոր պարտէզիս տեսնելու տեսքը սիրուն,
Օր մը նորէն, բախտըս իմ, ըլլար անկեղծ ու բարի,
Ու զերջ մը տար իմ կեանքիս հայրենավառ ցաւերուն:



ՀԱՅՐԵՆԻ ՎԱՐԴԵՐ

Չեզ է որ ահա՛, վերստին կուգամ, որպէս ուխտաւոր,
Իմ սիրալս դնել ձեր թարմ ոտքերուն՝ դալար անսահման.
Չեզ է որ ահա՛, նորէն ու նորէն տանջած, մենաւոր,
Իմ կեանքը վերջին կ'ուզեմ ձեզ բերել, ձեր մօտը միայն:

Իմ սիրտս էր անզուսպ, լայն էր ու անծիր, ովկեան մը անհուն,
Իմ սիրտս էր բացուած արշալոյն աղւոր, համակ ոսկեվառ.
Իմ սիրտս էր պարտէզ, բուրաստան ծաղկուն, վարդաստան սիրուն,
Իմ սիրտս էր թոչուն՝ որ հիմայ զարնուած կուլայ ոգեվար...

Այս որքա՞ն ծանձրոյթ, որքա՞ն յոզնութիւն, տանջանք չարաչար,
Այս որքա՞ն թախիծ, որքան տրտմութիւն, անվերջ ու անծայր.
Տարածուած կրծքիս, ամբողջ էութեանս հրդեհ մը անմար,
Յաւէտ կը տանջէ իմ կեանքը զարուն, իմ կեանքը պայծառ:

Ու դուք տեղ տուէ՛ք, ինձ ճամբայ բացէ՛ք, ահա՛ ձեզ կուգամ,
Ո՞վ իմ հայրենի վարդի ծաղիկներ, բուրեան, քաղցրահամ.
Ես ձեզի՛ կարօտ, կ'ուզեմ ձեզ տեսնեմ, տեսնեմ մէկ անզամ,
Ու այնպէս մեռնիմ, այս չար աշխարհէն անդարձ հեռանա՛մ...



ՀԵՌԱԽՈՇ ՀԱՅՐԵՆԻՔ

*“Quand reverrai-je, hélas!
De mon pauvre village
Fumer la cheminée” ...*

Օտա՞ր, օտա՞ր, օտա՞ր են, ինծի համար այս վայրեր,
Պուրակը սա դալարուն, ուր թռչնիկները կ'երգեն,
Ու անոր գիրկն սպիտակ տընակս այս մենասէր,
Չե՞ն հրճւեցներ իմ հոգիս, որ կ'արտասուէ տարօրէն:

Որքա՞ն կ'ուզէք ժպտեցէ՛ք, ո՞վ աղջիկներ քաղցրասուն,
Որքա՞ն կ'ուզես, դու՛ երկի՛նք, եւ դուն արե՛ւ տարփաւոր,
Եղէ՛ք պայծառ ու ցընծուն, եղէ՛ք անջինջ ու ժպտուն,
Նորէ՞ն, նորէ՞ն ես կ'ուզեմ տեսնել իմ գիւղս հեռաւո՞ր:

Չունիմ ես ոչ մի նախանձ ձեր լոյսերուն ու փառքին,
Չե՞մ մոռանար բարիքը՝ որ դուք երբեմն ինձ կ'ընէք.
Դիտեր իմ միշտ ձեր մարմնին ձեւն ու կեցուածքը ուժգին,
Լոյսը ձեր այդ ստեղծող՝ կ'երգէ քնարս իմ այս հէ՛ք:

Բայց ո՞ւր տանիմ ծանձրոյթն այս՝ որ զիս կ'ընէ խենդ զինով,
Ո՞ւր խեղգել իմ հայրենի յիշատակներըս անհուն.
Ինչպէս մոռնամ աղբիւրն այն՝ ուրկէ փոքրիկ սափորով,
Զո՞ւր կը կըրէր քոյրըս իմ՝ ամէն առառու ու իրկուն...

Սմաէ՛ր, անսէ՛ր, անսէ՛ր են, ինծի համար այս վայրեր,
Որքա՞ն կ'ուզես, դուն՝ Փարփա, եւ դուն՝ Արուեստ գեղածոր,
Օտար այս խորթ ափերուն, եղէք ինձ մայր սիրաչեր,
Նորէ՞ն, նորէ՞ն հիւանդն եմ, հայրենիքիս հեռաւոր...

ԻՆՑԻ ՀԱՄԱՐ ՄԻԵՒՆՈՅՆՆ է

ու

ինծի համար միեւնոյնն է երկիրը այս լոյս կամ խաւար.
Բայց ես ինծի չեմ ճանաչեր, ոչինչ մըն եմ ես ինծ համար.
Հոգի՛ս է սոսկ որ կը տենչա՛յ հասնիլ գազաթն Արարատին,
Հոգի՛ս է որ կ'ուզէ ընդմիշտ ապրիլ Տունը մեր պարզ ու հին:

Ես չեմ տեսած մեր Մասիսին դէմքը սիալակ ու լուսավառ,
Ես չեմ ապրած մեր մայր երկրին բուրաստանները ծաղկավառ,
Բայց իմ հոգի՛ս, իմ որբ հոգի՛ս, անոնց կարօտն ունի անշէջ,
Ու ընութեան չափ անսահման՝ բաղծանք մը կայ իմ սրտիս մէջ:

Ո՞վ «նոր մարդեր», ո՞վ ընկերներ, որ կը խնդա՛ք դուք իմ վըրան,
Ես ծեզ կ'ատեմ յաւէրժօրին, երբ կը ծաղրէք հոգիս համայն.
Օր մը ես ծեր մօտէն անցայ, սրաերը ծեր տեսայ ունայն,
Իմ երգերը,— դուք կ'ըսէիք, պիտի չապրին լոյսին նըման:

Բայց դուք ի՞նչպէս կ'ապրիք այդպէս, երբ չէք ճանչնար լոյսն իրական
Լոյսը սիրտս է, իմ հոգի՛ս է որ կը ցանկայ Վաղուան Օրուան,
Օրը Վաղուան՝ Հայրենիքն է մեր ցաւատանջ ու աննման,
Անոր համար ահա՛ յաւէտ կը տառապիմ, կ'ապրիմ միայն:

Ինծի համար միեւնոյնն է երկիրը այս լոյս կամ խաւար,
Բայց ես ինծի չեմ ճանաչեր, ոչինչ մըն եմ ես ինծ համար,
Հոգի՛ս է սոսկ որ կը ցանկայ հասնիլ գազաթն Արարատին,
Հոգի՛ս է որ ընդմիշտ կ'ուզէ դառնալ Տունը մեր պարզ ու հին:



Ո՞Վ ԸՍԱԿ ՈՒ...

Խ. Հայաստանին

Ո՞վ ըսաւ որ դուք էք եղած փրկին համակ մահամերձին.
Ո՞վ ըսաւ թէ միտքն էք ծերին որ վերջ դըրաւ Ասելութեան,
Դուք կը ստէ՛ք, թո՛յն կը սըրսկէք ճշմարտութեանը ըընական.
Օտա՞րն էք միայն, որ ծեզ խարեց, խաբեցիք մեզ՝ դուք ծեր կարգին:

Այդպէս եթէ դուք կ'ըմբռնէք մեծ պատմութիւնն ընդհանրական,
Այդպէս եթէ դուք կը մտնէք խո՛ր անդունդներն հոգիներուն.
Հայրենիքին, այդպէս եթէ դուք կը կըշոէք վիշտը անհուն,
Ինծ լըսեցէք, իմ եղբայրնե՛ր, կը պաղատիմ ծեզ անսահման:

Այո՛, գիտեմ, մանուկ էինք անբանական եւ խենդ ու չար.
Իմաստութեան կենսապարզեւ աստուածը դեռ չինք ճանչնար.
Առանց միջատ մը մեղնելու մենք գոհուեցանք անթիւ հազար,
Ու մեր հոգին մեր մարմնին հետ վըշըրուեցաւ անգթաբար:

Բայց ծո՛վ արցունք թափիէք վերջ կրկնն անգամ դառնանք ծառա՞...
Բայց արցունքի լոգանքէն վերջ նորին անգամ լողանա՞նք դեռ.
Կաղոնները, Ազատութեան համա՞ր մեռան սրբանըւէք.
Կոռւելք վերջ մենք չենք դըներ զլուխը մեր խաչին վըրայ:

Որքա՞ն ատեն մենք կ'ունենանք մեր մէջ կիրքեր անմարդկային,
Որքա՞ն ատեն եղբայրը մեր ուզէ զոհել մեզ իր փառքին.
Որքան ատեն թշնամին նենգ տէք կը դառնայ Հայ Աշխարհին,
Մենք չենք հաշտուիր, ու կը պահենք Աքիլէսի քէնը անգին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒՆ

Ես չեմ տեսներ լոյսն այն նոր, զոր դուք կ'երգէք ոստոստուն,
Բնազդին իմ մէջ կը խօսի՞ թէ դուք դեռ չէ՞ք սրտաբաց.
Չեր ծեւերուն նայելով՝ կ'ուզեմ փախչիլ ես հեռուն,
Նայուածքը ծեր, դեռ ինձի, սիրոյ խօսք մը չէ ըսած:

Կ'ուզեմ մոռնալ առ յաւէտ, իմ այս երազը սրտիս,
Բարձունքներու տիրանալ, եթէ ուզէք, չեմ ցանկար.
Չեր մեծութեան կը զոհեմ բոլոր բարիքն իմ ես իս,
Միայն գիտնամ՝ անկեղծ են, երգերը ծեր անհամար:

Սակայն կասկածն իմ մէջ է, մենք խաբուած ենք բիւր անգամ,
Աւա՛ղ, կըզգամ, որ կեղծ են, բոլոր երգերը ծերին.
Յանուն լոյսին, ճշմարտին դուք կը ճառէք միմիայն,
Առանց երբէք զարնելու ծեր մուրճն հսկայ մա՛յր Սալին:

Բա՛ւ է, որքան խարեցիք դուք ծեր խիղճը ու մեզի,
Բա՛ւ է, որքան մենք տարինք օտարութեան լուծը սիւ.
Մեր բոլորին համբոյրէն թո՛ղ Արշալոյսը ծընի,
Ու հայրենի երկրին մէջ մեր ապագան առնէ թիւ....:

ՏԻՐՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ այս ժամուն, այս բաղցըր ժամուն
Ով սիրտ իմ հպարտ, դուն լո՛ւռ կը խոկաս.
Ինչո՞ւ մելամալձ, ու մի՛շտ արտմերագ,
Ցաւը կը տեսնես, քու մէջ, ու հեռուն:

ՍՐԲՈՒՀԻ

«J'ai été étonné le Dimanche au sortir
de la messe, de voir la beauté des jeunes
Arméniennes qui s'en retournaient à
demi-voilées chez elles.»

Dubois de Monpréoux

Սրբուհի՛ իմ քո՛յր, գեղավա՛րս աղջիկ,
Ծաղկուն հասակով դու՛ հպարտ սօսի,
Նորէն այս գիշեր, լո՛ւռ ու անդորրիկ,
Ես քեզ կը լիշեմ, կ'արտասեմ քեզի՛:

Սրբուհի՛, իմ քո՛յր, դու գարնա՞ն հիրիկ,
Վարսերը նորէն, նման են սաթին,
Աչերդ արդիօք, կը ժպտի՞ն յուշիկ,
Սյուերդ բալազեղ, ծիծուն կը վառի՞ն:

Գիւղակ դառնայիր երբ այգին ի վար,
Սրբուհի՛, իմ քո՛յր, կալերուն մօտիկ
Քեզ կ'սպասէի, ու հոն, սիրավառ
Կուտայիր ինձի համբոյրնե՛ր բաղցըրիկ:

Սրբուհի՛, իմ կեա՞նք, կուզամ ես քեզի՛,
Կը մոռնամ, օտար ասաղե՞րն հեռաւոր,
Բայց ըսէ՛, հոգիս, ով չքնաղ՝ սօսի,
Նորէն դու կ'ապրի՞ս առջի պէս աղւո՞ր...



ՈՒ ՎԵՐՍԻՆ

Ա. Ահարոնիստին

Ու վերստին դուն կը դառնաս մարդերուն մէջ բարի ու չար,
կը միացնես երգերդ քու անոնց երգին կարօտավառ,
Զոհ կը տանիս դու քու հոգին անոնց խոնարհ հոգիներուն,
Ու կը կոռւիս անոնց համար անյաղթելի կամքով անհուն:

Դուն կը ճանշնաս մեր լիոներուն կեցուածքը յաղթ ու աիրական.
Շնչեր ես խոր հովիտներու շունչը բուրեան, անապական,
Շուշաններու ժպիտը թարմ կը շողշողայ դէմքիդ վրան,
Ու դու զիտես խօսիլ լեզուն աստուածներուն անմահական:

Դուն կը չափես միակ զիծ մը, միակ ճամբայ, տարածութիւն.
Քու երկրին ու երկլնքին ազատութիւնն է քեզ անգին.
Կեանքին առաջ որպէս հերոս, խիզախ ու վեհ, յաւերժական,
Բարձր ես կանգնած՝ ու կը ցանկաս հասնիլ մինչեւ դուռը մահուան:

Քեզի համար կեանքն ու մահը ցունին ո՞չ մի տարբերութիւն,
Մեծ Սոկրատի հոգիին պէս խորունկ է քու ժպտուն հոգին,
Արեգակին չափ կը սիրես տժգոյն լուսինն երազական,
Ու քու յոյսդ, ու քու վիշտ ծուլուած են միշտ եւ անբաժան:

Ու բոլորէն այս աւելի դուն կը պաշտես Ծունն այն աւեր՝
Որուն համար մարդկութիւնն այս կաթիլ մ'արցունք չի տուաւ դեռ,
Ու կ'երազիս որ օր մը դուն Հոմերոսի քնարն առած
Պիտի երգես հնարքն այն մեծ՝ Ողիսեւսին աստւածացած...;

ԵՍ Կ'ՈՒԶԵՄ ԵՐԳԵԼ

Լուռ է իմ սիրալ, տխուր է յաւէրժ, տխուր անդադար,
Զի լսեր հոգւոյս սարսափի միջերն հատնող, ոգեվար,
Ամառուայ կիզիչ արեւուն նման կ'այրի մշտավառ,
Մեր հին հայրենի գուսան երգիչ իր երգն է անմար:

Ու ես վեր կ'ելիմ, կը գոցեմ դուռն իմ աւելի ուժգին.
Կուգամ վերստին զիրկը մենութեանս, դէմքով սարսուագին.
Նստած իմ սրտիս նիշտ դէմն ու դիմաց, որ կուլայ կրկին,
Ու իր արցունքն, իմ ա'լ արցունքներս, կ'ուզեմ որ յորդին...

Օ՛, իմ արցունքներս. ծեզմէ կերտուած երգերս են միայն,
Որ պիտի խեղդեն վատութիւնն այս չար դարուս Մարդկութեան.
Դուք էք որ յաւէտ պիտի բորբոքէ՛ք Ոգին հայկական,
Որ դեռ անտարբեր՝ իր մեծ վէրքն վերջ, դիակ մէ համայն:

Ո՞վ պիտի երգէ, եթէ դուք ըլլաք, ո՞վ իմ արցունքներ,
Յիշատակն անմահ, մեր մեծ մահերուն շիրիմին վրան.
Ո՞վ պիտի պատմէ Ողբերգն այն հսկայ, որ չէ դեռ երգուեր,
Եթէ դուք չ'ապրիք, ո՞վ պիտ'ըսպաննէ մեր նենգ ոսոխն այն:

Դուք միշտ կաթեցէ՛ք, կաթեցէ՛ք հոսուն, անո՛յշ արցունքներ.
Ու ծեր անծրեւէն թրջուի՛ թող ծարաւ հոգիս անապատ,
Ես կ'ուզեմ երգել գերեզման չիշած երգ մը գերիվեր,
Որմէ ներշնչուած՝ իմ ցեղս ապրի՛ յաւերտեան ազատ:



ՎԵՐԱԴԱՐՁ

Նուէր՝ Հայ Արքերուն

Ես ալ ծեզի պէս որբ մըն եմ անտուն, իմ որբ ընկերներ,
իմ սիրառ ալ նման ծեր այրող սրտին, ցաւով կը տանջուի.
Բարի ու ժապուն սա մայր բընութեան գանձերը ոսկի
Կը թըշին ինձի գերութեան տանող ժանդո՞ւ շղթաներ:
Լոյսն երբոր ծագի, իմ շուրջս է կարծես խաւարով պատեր.
Ինձ համար յաւէտ մեռեր են անշուք, Գոյն, Զեւ, ու Շարժում,
Մթութեան պէս խիտ հոգիս է անշունչ, անզօր ու տրտում
Մարդերն այս երկին կ'երեւան ինձի որպէս թէ դեւե՞ր...
Չունիմ ես այս տեղ ոչ մէկ բարեկամ, ոչ հայր, եւ ոչ մայր.
Սրտակից ընկեր՝ օրերով վնատեմ, դարձեալ չեմ գտներ.
Երգով մ'երը ուզեմ սփոփել խոցուած սիրսոս կարեվէր
Զիկայ ունկընդիր. ու վիշտս այսպէս կը մնայ միշտ վա՛ռ:
Մեզ ո՞ւր պիտ' տանի ճամբան այս օտար, ճամբան այս մոլոր.
Ո՞վ իմ ընկերնե՞ր, իմ ո՞րբ ընկերներ—դուք այնքա՞ն անուշ.
Տեսէ՞ք, շուրջն անոր տատասկներ լիցուն, հազար եւ մէկ փուշ,
Տեսէ՞ք, շուրջն անոր, կարին, վիշտապներ խայթող, թունաւոր:
Մենք չէ որ սակայն պիտ' ուզենք սոսկալ օձէ, կարինէ.
Մենք կ'ուզենք հասնիլ բարձունքն այն լեռան սպիտակ ծէւնէ.
Ճամբան մերը չէր... Օ՞ն, իմ ընկերնե՞ր, այս մեր ճամբան է,
Բոլորա մէկտեղ՝ ու թող միագոռ մեր երգը հընչէ...
Բաւ է որքան դեռ, մնանք մենք այսպէս օտար երկիրներ.
Հեռու մեր երկլէն՝ որբերն ենք յաւէրժ այս չար աշխարհին.
Մենք վերջին անգամ բռունցք վեր կ'առնենք մեր վատ ոսոխին,
Ու մուր քսելով ազգերու խղճին, կ'ըսենք՝ ո՞վ վատե՞ր...
Կ'ըսենք ու կ'երթանք մեր հին օրերու տունն հայրենական.
Դիտենք, դեռ լեցուն չէ՝ ծագած ազատ արեւը հայտն.
Բայց մենք կը ճանինանք Ուժը մեր Յեղին անյաղթ ու անհուն.
Հո՞ն, հո՞ն է, որ մենք կ'ուզենք ապրիլ նոր Օրը Վաղուան...

ՀԻ՞Ն ՕՐԵՐ

Ու վերստին կ'առանձնանամ իմ մենութեան պալատն այս լուս,
Գիշերին պէս ես կը սիրեմ լութինը համայնական,
Սիրտս երբոր կը չարչարուի, անհունօրէն կ'ըլլայ տխուր,
Կ'առնեմ քնարս, ու երգելով կ'ուզեմ մեոցնել վշտերս համայն:

Այդպէս կ'ընէր Մեծն Աքիլլէս քաշուած ոսկի վրանին տակ,
Տարփուհին սէրը երբոր իր միտքը գար, բերել կուտար
Պատէն կախուած քնարն աղուր, ու երգելով խիստ ներդաշնակ
Կը մոոցընէր արցունքին հետ լիշտակներն իր տարփաջեր...

Հիմայ է որ կը հասկնամ ծեր մեծութեան գաղտնիքը խոր,
Ո՞վ հին մարդեր, ո՞վ մեծ մարդեր մեծ դարերու ու պատմութեան,
Դուք գիտէիք առանձնանաւ, սեղմել ծեր մէջ ցաւը հըզօր
Ու ստոյիկ ժպիտով մը բարձրէն գիտել կեանքը ունայն:

Ես այս գիշեր ծեզ լիշելով կը մոռանամ վշտերս անհուն,
Ցիշատակէն ծեր վերացած՝ կը մոռանամ բախտս թշուառ.
Զեր լութեան մէջ կը տիսնեմ կեանքը համակ լոյտով օծուն,
Ու երգելով կ'ուզեմ մեոցնել դառնութիւններս հազա՞ր, հազա՞ր:

Ի ԹԻԿՈՒ Ի ՆԸ

Իրիկունն ոսկի, իրիկունն աղուր
Նէմփա մ'է կարծես բլրակին վրայ.
Իրիկունն հիրիկ, բայլերով անդորր,
Կոյսն է, որ դաշտէն՝ գիւղակ կը փութա՛յ...

ԻՄ ԳԻՒՂԱ

Սպիտակ էր ու քարաշէն,
Պարտէզներով խիտ գարդարուած.
Եկեղեցին՝ ճիշտ դիմացն էր
Մեծ բերդն ալ, հոն, մօտը կանգնած,
Ճակատն անոր բլրակ մը կար
Վայրի տունկեր բուսած վրան.
Այդ բլուրէն կ'անցնէր հօտը,
Ու եայլային խնկոտ նամբան...
Ետեւի կողմն էր Սուրբ Թորոս,
Կաթողիկէ շինուած ոնով.
Գերեզմանն ա՛լ իմ հայրերուս
Հոն էր, ոսկի՛ մեղուներով...
Ու աղբիւրը կար անապակ,
Ծորակներովն իր կարկաչուն.
Մատ մը քայլ վար, ուռիխն տակ,
Աշուղն էր ան, հէքեա՛թներուն...
Գարնան՝ ջուրը առատ կ'ըլլար,
Ու ծորակ մը, մէջէն կ'անցնէր.
Կը խաղայի՛նք, ափերն անոր,
Ու մեր կեանքը դրախտ մըն էր...
Ո՛չ հարուստ էր, ո՛չ ա՛լ աղքատ,
Աստուածն էինք բայց մենք անհուն
Անոր շուքին ու լոյսերուն,
Անոր զուարթ զարուններուն...

Կանաչ, կարմիր հարսերու պէս,
Ծաղկած աղւոր դաշտեր ունէր.
Արքաներու կեցուածքին պէս
Կապոյտ, կարմիր սարեր ունէր...

Կեանքը այնտեղ վեթակ մըն էր
Մեղուներու հայրենական,
Աշխատանքը լո՞յս կ'անձրեւէր,
Ու սէրն էր հոն անմահական...

Ու ան մերն էր, ա՛խ, մերի՛նը...
Զէինք ճանչնար ցաւ ու կարիք,
Զէինք ճանչնար պանդուխտ օրեր,
Ու կ'ապրէինք խիստ երջանիկ...

Աստուած, Աստուածն իմ պապերուս,
Պիտի դառնանք նորէն անշէջ.
Պիտի երգե՞նք նորէն ազատ՝
Մեր երգերը իր ծոցին մէջ...

* *

Կ'ուրախանայ՝ կարծես հոգիս.
(Յոյսը սիրտն է Աստուածներուն)
Կ'ուրախանայ՝ սիրտս կարօտ,
Վերադարձի՛ս համար սիրուն...



* * *

Հայրենական աղքիւրին մօտ պարտէզիս
Երթա՛մ մինակ, ուխտաւորի՛ կարօտով,
Երգեմ սրտէս բաղձոտ տաղեր ու հոգիս
Դառնայ նորէն սէր ու ծիծաղ, ու գինով:

Արեգակի պէս գեղեցիկ ու սիրուն
Երբոր կոյսերն իմ գիւղակիս, շարէշար
Անցնին մօտէս սափիորներով հի՛ր թրծուն,
Ես անոնց տամ հազար գովքեր սիրավառ:

Յետոյ, մշակ, ու հօտաղներ ու բանւոր
Դարաստանէն երբ շուտափոյթ հեռանա՞ն
Փշատիի շուքերուն տակ, մենաւոր

Ես սպասե՛մ մա՛յր ցորեկին աննման,
Սրտիւ լրին, երազական խորհուրդէն
Չարաճընի ծղրիթներն իսկ կը լրոեն...



571 6

ՎՐԵՊԱԿ

Էջ	ՏՈՂ	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
3	20	Մասիսին	Արագածին
8	8	Ու	Որ
15	3	Նուբ	Նուբը
34	18	մարդկութինն	մարդկութիւնն
40	13	Սրտիւ	Որու

2013

ԳԻՆ 5 ՓՐԱՆՔ

Ա Ե Ր Ա Մ
Տ ա ւ ա լ